

Թողիկոսն Վերապեցի: Եւ այս էր սող եւ կէս սակին, որ հետի էր յեղծեալ եւ ի ջնջեալ գրէն: Եւ գրեալ սող մի սակի եւ կէսն կարմիր. զի յՆՃԻՐԻՆ կաթնղիկոս նստաւ եւ մտաք յսկէգիրն եւ ելաք յեղծեալ գրէն եւ ջնջեալ տառէն: Եւ ամենայն անէծք եւ նոյնք... ի յօրհնութիւն փոխարկեցաւ»:

Հետաքրքրական է որ «եօթն սող սակին» համեմատուած է «Կիրակոս» անունն եօթը գրերուն հետ. կէս մը, որ օտար է Տեսլանն:

(Շանուկայի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԺԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՅՈՒՊՈՒՅՑ ՊԵՏՄԻՐԵԱՆ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻ ԲԵՏՄԻՐԻՃԵԱՆ

(Շարունակութիւն:)

Երեմիա Զելեպի այսպէս՝ Ներսէսի կղզին եւ Փիլիպպոս կաթողիկոսին Կ. Պոլիս գալը ու անոր հետ իր ալ Պուրսա երթալը յիշատակել յետոյ, կը վերադառնայ Կ. Պոլիս եւ զարձին՝ կը թուէ տեսնուած գիւղերն ու աւանները եւ ասոնց հետ՝ իշխանաց կղզիները՝ սապէս.

Տաղ 227.

Գրբը՝ Հէյպէլի՝ Սիվրի, Գրնալի՝ Պուրղագ եւ Դաւառն Ուրայն անուանք են կղզեացս՝ Մէջ սոցա եւ Պէոյիւկ ատան:

Սարգիս Դպիր Սարաֆ-Յովհաննէսեան ալ իր Պուրսական պտոյտին վերջընթեր էջին վրայ կը նշանակէ այս կղզիները իրենց անուններով՝ սապէս.

«Եւ ի Ֆէնէր Պաղչէսիէն տեսանին մօտակայ կղզիքն ի մէջ ծովուն, որոց անուանքն են քուրքերէն Գրնալը, Սիվրի ատա, Պէոյիւք ատա, Եաւր ատա, Պուրղագ ատա, Դաւառն ատա, Գրբը ատա, եւ Հէյպէլի, եւ կըզդին Ներսէսի»:

Երեմիա եւ Սարգիս Դպիր միեւնոյն կարգաւ չեն ներկայացունէր կղզիներուն անունները, բայց փոյթ չէ, եւ պէտք է որ պտոյտ մը ընենք անոնց մէջ, զի հայկական յիշատակներ եւ բնակչութիւն կը գտնանք հոն:

Թողլով Ներսէսի կղզին, որ, կը կրկնեմ, Եաւր (տափակ) կոչուածն է, եւ որու վրայ խօսեցանք, նկատի կ'առնեմ նախ Գրնալը կամ Բոօքի կղզին, որ նաեւ էրմէնի Ատաի (Հայու կղզի) անունը կը կրէ, որովհետեւ վաղուց՝ Հայեր միայն սկսած են բնակիլ հոն, գրաւելով ամբողջ ծովեզրը եւ բարձունքը:

Ի սկզբան մատուռ մ'ունեցած են հոն Հայերը, բայց յետոյ՝ Յակոբ Պատրիարքի օրով կառուցած են քարուկիր գեղեցիկ Եկեղեցի մը, որուն ճակատը կը կարդանք հետեւեալ Արձանագրութիւնը, զոր քաղած եմ անձամբ 1900ին.

ԿԱՌՈՒՅԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ
ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐԶԻՆ,
Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
ՏԵԱՌՆ ՅԱԿՈՒԱՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1857 ՍԵՊՏ. 22

Սիրուն Եկեղեցի մ'է Գրնալի Եկեղեցին. անոր առաջին Քահանայն եղած է Տէր Դիոնեսիոս, որ միանգամայն իւրովսանն կը կրթէր է գիւղին մանուկները:

Ճանչցած եմ զինքը իր ծերութեանը մէջ, բարի, անձուէր, եւ անշահախնդիր քահանայ մ'էր, վախճանած է ի խոր ծերութեան 16/29 Յունիս 1912ին, որու մասին Բիւզանդիոն թերթը կը գրէր հետեւեալը, զոր Գրնալը կղզիի հայութեան ամբողջ պատմութիւնը կարելի՞¹⁸⁶ է համարել:

«Երէկ զիշեր Գրնալը կղզիին մէջ վախճանեցաւ աւագերէց Տ. Դիոնեսիոս Ա. քահանայ, որ Կ. Պոլսոյ քահանայական դասուն աւագագոյն անդամն էր թէ՛ իր տարիքով եւ թէ՛ ձեռնադրութեան կարգովը: Վախճանեալ քահանան առաջին հիմնադիրներէն մին եղած է կղզիին Հայ բնակչութեան եւ անոր զարուցին ու եկեղեցւոյն: Անցեալ դարուն յիսուական թուականներուն երբ քանի մը Հայեր Գրնալը բնակիլ ընելու գաղափարը կը յղանան եւ արտօնութիւն ձեռք բերելով տուներ կը շինեն, իրենց առաջին գործերէն մին կ'ըլլայ եկեղեցւոյ մը հիմ դնել: Միեւնոյն ատեն գաղափար կ'ունենան զարոյցի մը կազմակերպութեան եւ իբր մանկավարժ Պատ. Ճիզմէճեանը Սամաթիայէն տեղափոխելու Գրնալը: Հոն, անիկա առաջին դասարանը կազմած է, հնօրեայ ծառի մը տակ, փոքր մանուկներն իր շուրջը ժողովելով եւ անոնց կարգալ սով-

¹⁸⁶ Բիւզանդիոն, Թիւ 4641, 17/30 Յունուար 1912:

րեցնելով: Երբ քիչ ետքն եկեղեցին ալ կառուցուած է, անձուէր վարժապետը կոչուած է նաեւ հովուութեան, 1857ին նորաչէն եկեղեցւոյն վրայ քահանայ ձեռնադրութիւնով: Տ. Դիոնեսիոս քահանայ խղճմտութեամբ շարունակած է երկար տարիներ թէ՛ հովիւի եւ թէ՛ ուսուցիչի կրկնակ պաշտօնները, այս փոքր կղզիին մէջ, առանց հետամուտ ըլլալու աւելի ճոխ պաշտօններու եւ աւելի պէրճ թաղերու: Վերջերս, աչքերը տկարացած էր, սակայն միշտ իր պարտքը կը կատարէր, Կիրակի օրերն եկեղեցական պաշտամանց ներկայ գտնուելով եւ զոց արտասանելով բոլոր աղօթքներն եւ ընթերցումները: Ինք Գրնալի կազմակերպութեան առաջին վկան եւ գիւղին նահապետն էր»:

Ինչպէս սոյն տողերէն կ'երևի, Տէր Դիոնեսիոս նախ ծառի մը շուրջն տակ կը ժողովէ եզեր գիւղին տղաքը, բայց յետոյ՝ երբ Հայ բնակչութիւնը շատնալ կը սկսի հոն, կը կառուցուի Ս. Ներսէսեան անուանով երկսեռ վարժարան մը¹⁸⁷, որ քանի մը տարի առաջ այրեցաւ:

* * *

Եկեղեցւոյ աջ ու ձախ գաւթիին մէջ կան մէկ մէկ պատկեր, որոնք 1859 Դեկտեմբեր 9 թուականը կը կրեն եւ ստորագրուած են՝ «Պատկերիան Անանիա Խաղիւղի» կողմէ: Ասոնցմէ զատ տաճարին մէջ ալ կան՝ «Խաչելուքեան» մեծ պատկեր մը՝ 1852 թուականու, եւ «Ս. Աստուածամայ» փոքրագիւր նկար մը, 1830ին Սամաթիա գծուած, զոր 1919ին նուէր կու տայ ծանօթ գրագէտ Յ. Գ. Մրմրեան, ինչպէս գրուած է վրան:

Գիւղը ունի իւր Գերեզմանատունը ծառագարդ ու ծաղկաղարդ, որ կը գտնուի Եկեղեցւոյն ճիւղ ետեւը եւ ուր կը հանգչի վերջիչեալ բազմերախտ Քահանայն՝ Տէր Դիոնեսիոս:

Բայց այս Գրնալը (կամ Բոօթի) կղզին՝ Քաղկեդոնի պէս Բիւզանդահայ պատմութեան մէջ ունի էջեր:

Այսպէս՝ վարդան անուն Հայը, որ 803ին ինքզինքը կայսր հռչակած էր, անյաջողութեան հանդիպելով կը քաշուի Բոօթի կղզին եւ հոն իւր շինել տուած վանքին մէջ կը սկսի ճգնիլ ու պարապիլ երկրագործութեամբ, բայց թշնամիները զինքը հանգիստ չեն թո-

¹⁸⁷ Տարեցոյց Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին, 1901, էջ 245:

ղուր, կ'երթան կը բռնեն ու աչքերը կը կուրցունեն 804ին, եւ սղոպէս կայսր աչքով կը վերջացնէ հոն իր օրերը¹⁸⁸:

Նոյնպէս Լեւոն Ս. Հայկազնը, որ «Մեծ կայսր» արտօսը վայելց եւ թագաւորեց 813—820, չարաչար կը սպաննուի եւ կը թաղուի կղզիին գաղաթը գտնուած Յունական վանքը¹⁸⁹, ուր անոր գերեզմանապիւնը իբրեւ թէ Հայագէտ Չօլաղիտէս 1867ին ցոյց տուած ըլլայ կղզեքանակ աղագայիններու:

Կ'ըսուի թէ Բիւզանդահայ կայսրուհիներ ալ հոն թաղուած ըլլան ժամանակին, բայց ո՞ր աստիճանի ստոյգ է այս, կը վարանիմ զիտնալ:

Գրնալըն յետոյ կը գտնուի Պարկազ (կամ Անթիկոնի) կղզին, ապա Հէյպէլի (կամ Հալքի) անուն բաւական մեծ կղզին, երկուքն ալ յունարեան: Միայն թէ այս կղզիներէն երկրորդին մէջ կան չորս հատ հայերէն արձանագրութիւն՝ 18րդ դարու վերաբերեալ, որոնք կը գտնուին այդ տեղի Յոյն Աստուածարանական Դպրոցի Եկեղեցին, եւ հրատարակուած են Կ. Պոլսոյ «Մաղիկ» թերթին մէջ¹⁹⁰:

Սոյն Արձանագրութիւններուն առաջինը փորագրուած է պարտէզին մէջ գտնուած ջրհորի մը բերանը ծածկող կլորակ քարի մը վրայ սապէս.

ԱԿՆԱՅ ԳԵՂԵՆ ԶՕՐԷՑԻ ԼՈՒՍԱՌՈՐԿԻ ՄԱՀՏԵՍԻ
ՄԻՆԱՅԵԼԻ ՈՐԳԻ ՄԱՀՏԵՍԻ ՆԻԳՕԼԱՅԻՆ ՅԻՇԱՍԱԿՆ Է. 1792 ՍԵՊՏ. 25:

Միւս երեքը կը գտնուին եկեղեցւոյն մէջ՝ Նախ՝ խորանը ծածկող փայտեայ վարագոյրին երկու կողմը կանգուն պղնձի խոշոր աշտանակներուն մէկ հատին վրայ՝

ՅԻՇԱՍԱԿ Է ԱՅՍ ԲԱՐԵԱՅ ԱՇՏԱՆԱԿՐՍ ՄԱՀՏԵՍԻ
ՏԵՍԻ ԵՂԻԱՅԻ ՈՐԳԻ ՅԱԿՈՐԻՆ ԹՎԻՆ ՈՄԻԱ (1772):

Յետոյ՝ Երրորդութեան պատկերի մը վրայ՝

ՊՈՒՇԱՍԱԿ (Իմա՛ այս յիշատակ) ԷԿԻՆԻ
ՉՕՐԱԿԼԸ ՀԱՃԻ ՄԻՔԱՅԵԼԸ, ՀԱՃԻ ՍԱՀԱԿ,
ՀԱՃԻ ՄԵԼԻՔ, ՌՄԻԷ (1778):

Իսկ Չորրորդը՝ Աստուածածնի պատկերի մը վրայ՝ սապէս.

¹⁸⁸ Հ. Կ. Տէր Սահակեան, Հայ կայսեր Բիւզանդիոնի, Ա., էջ 158:
¹⁸⁹ Անդ. Ա., էջ 194 եւ Բ., էջ 346:
¹⁹⁰ Մաղիկ, Կ. Պոլիս, Գ. տարի, Թ. 32, 11 Սեպտեմբ. 1893:




գործութիւնը յայտնող Արձանադրութիւնը անվթար պահելով հանդերձ, իր անունը փոխած ու եղած է «Պէգնեան», վասն զի Յարութիւն Ամիրայ Պէգնեան, որ Տիւրքիանի շնորհիւ յառաջադիմած էր, վերաջինած էր պոյն ի յիշատակ իւր մեծանուն բարերարին ինչպէս մանրամասն կերպով ատոր պատմութիւնը հրատարակեց Մելքոն Ասատուր¹⁹⁸ :

Բարեկեցիկ գիւղ մը եղած է Գարթալ եւ անդուոյն Հայերը մեծ մասամբ զբաղած են այգեգործութեամբ եւ գինեգործութեամբ, ինչպէս ըսի վերեւ : Ասոնք ունեցած են՝ ըստ ականգութեան, ընդարձակ այգիներ, որոնք կը տարածուին եղեր երբեմն, Գարթալէն մինչև իր ետեւը մէկ ժամ եւ աւելի հեռուութեամբ գտնուած Եաֆանք անուն ծովագիտակ բլուրը, բաց այժմ այդ այգիներուն հետքը անգամ չի կայ, խոպան ու անմշակ դաշտեր են, եւ արդէն Գարթալցի Հայերն ալ չա՛տ նուազած են եւ աղքատացած՝ շնորհիւ 1915—1916ի տեղահանութիւններուն :

Գարթալի մէջ ծնած է 1822ին, նշանաւոր Սրբուհի մայրապետ Գալֆայեանը, որ իր անուանակիր Որբուհիանոցը հաստատած է 1866ին Ստաղիւզ, եւ կը հանգչի այդ շէնքին մատուռին ձախ կողմը (տե՛ս Հատոր Բ., էջ 443—445) :

Գարթալ գիւղով կը վերջանայ ահա «Ստամպոլոյ Պատմութեան» է. գլուխին Ծանօթագրութիւններս :

(Շարունակելի) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



ԳՐԻԹ ԵՐԷՑ ՍԵԼԸՉՈՐԵՑԻ ՏՈՂԱՆՈՅ

Դաւիթ Սալաճորեցի Ժէ. դարու հայ շնորհալի տաղասացներէն է : Անիկա Հայաստանի ծաղիկներու երգիչն է :

1. Կեանքը : Իւր Ծաղկանց գովասանքի մէջ կը գրէ Դաւիթ¹.

Երկիրս Արգրում կ'ասեն,
Սալաճոր գիւղս իմ օթեւան :

Ծնած է ուրեմն Կարնոյ շրջակայքի Սալաճոր գիւղին մէջ, ուսկից ասեալ կ'անուանէ ինք գինքը Սալաճորեցի :

¹⁹⁸ Տե՛ս Ժամանակ թերթ Կ. Պոլսոյ, 1934 Յունիս :
¹ Բանասէր, 1901, էջ 97 :

Սալաճոր կ'իյնայ Նորչէնի արեւմտակողմը . «սոյն գիւղ ասէն լինել ի նախնունն բաղձամարդ, գործէ վկայեն գերբուկը աւերակաց», կը գրէ Յովհաննէս Վաղարշակեացի² : Իր օրով կային այս գիւղը 8 հայ եւ 30 տաճիկ տուն . Իսկ 1883ին, ըստ Միրախորեանի³, 8 հայ եւ 28 տաճիկ տուն :

Ժամանակը, երբ ծաղկած է Դաւիթ, Հ. Ղ. Ալիշան, կը համարի «հաւանորէն Ժէ. դար»⁴ . Իսկ Նորայր Բիւզանդացի⁵ կը գրէ, «Թուի թէ ապրած է յժէ. կամ յԺԸ. դարու» :

Դաւիթի ծնողաց անունները ծանօթ չեն մեզի : Կ'երեւայ թէ մանուկ հասակին կ'ըսնացուց զանոնք . անիկա իր տաղերու մէջ կը ներկայանայ «որբիկ» : Իր խնամակարները կը յանձնեն զինքը անդուոյն քահանայի խնամքին, որպէս զի ծանօթանայ գրադիտութեան եւ պատրաստուի քահանայութեան : Իր «Հայր արարիչ» տաղին վերջը կը գրէ Դաւիթ .

Սալաճորի որբիկ Դաւիթ...
դու կարգացող քահանայու :

Իսկ «Քեզ համարով օր էր տըված» տաղին մէջ կը կարդանք .

Ես Դաւիթն եմ իրիցացու
ըստեղծող Տէր, զիս կարգացու :

Դարձեալ «Պարծանք դասուց» տաղին մէջ խօսքը Աստուածածնի ուղղելով կը գրէ .

Որբիկ Դաւիթ Սալաճորցի,
տըւիր ուրար, գիրս կարգցի :

Ստանալով ուրար նա եղած էր սարկաւազ . այսպէս Ծաղկանց գովասանքի մէջ (տող 127) կը գրէ .

Ծօ՛, Սալաճորցի սարկաւազ,
դաստան արիւր ծաղկըներուն :

Թէ հասա՞ւ երիցութեան, չունինք իր երգերու մէջ որ եւ է ակնարկութիւն : Բայց գիտենք որ անիկա ամուսնացած էր եւ ունէր զստրիկ մը, որ տարածամ մահուամբ վախճանած է, թողլով իւր հայրը սուգի մէջ : Կ'երեւայ թէ կ'ինն ալ վախճանած էր վաղամեռիկ : Իր կսկիծը զստեր մահուան պատ-

² Ճանապարհ., 17 :
³ Եկարագրական ուղեւորութիւն ի հայրենակ գաւառս Արեւիկեան Տաճկաստանի : Մասն Գ. Կ. Պոլիս 1885, էջ 169 :
⁴ Յուշիկը հայրենեաց, Բ., 126 :
⁵ Բանասէր, 1901, էջ 87 :

ճառաւ արտայայտած է Դաւիթ «Փառք քեզ թագաւոր փառաց» տաղին մէջ, որ նուիրուած է դստեր յիշատակին . կը գրէ .

Ես խիստ բարձրամիտ էի,
նա ումեկ գըրի Նոանայն .
Այնոր բարկացաւ Տէր ինձ
ու ձեռացս առաւ իմ տղան .

Ա՛յ իմ Նոանայ գստրիկ
Նոանայ սուրաթիւ անըման .

Աւախ քո կանանչ արեւզ,
որ մըտաւ ի հօղն ի զնտան . . .

Քեզ անձարն ձար անի,
մէկ ու ձար դուստր իմ Նոանայ,
Դու զիս բընաւերք արիւր,
զինչ պայղուչքն աւերքըն կենան : . . .

Կ'երեւայ թէ Դաւիթ իւր ամուսնոյն եւ դստեր մահէն ետքը վարդապետ եղած է : «Փառք քեզ թագաւոր փառաց» տաղին խորագրին մէջ կ'ըսուի . «Տաղս այս . . . Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաճորեցի» :

Անշուշտ միշտ Սալաճոր գիւղին մէջ չ'ենաց Դաւիթ : Թերեւս ինքն է այն Դաւիթ երէցն, որ Կարնոյ մէջ կատարած է օրինակութիւններ 1681 թուին : Իրմէ ծանօթ են ինձ հետեւեալ յիշատակարանները .

Երեւանի Պետ. Թանգարանի Յայտնաւորքը (Թ. 29 Բ) կ'ըսուի թէ «գրեցաւ . . . յաստուածապահ եւ ի գեղեցկաչէն մայրաքաղաքս Արգրում, ի դուռն Միւրան սուրբ Աստուածածնի, ի թուին ՌձԸ . եւ ի յամսեանն յունիսի Ժ. ի խնդրոյ . . . Շինոցի Ալեքսանդր սին . . . յիշխալիք . . . նաեւ զանարժան Դաւիթ զրիչս եւ զճողան իմ՝ զհայրն իմ զԵրբիկանուն եւ զմայրն իմ զԱննայն» :

Դարձեալ վիեննայի Միլիթարեան Մատենագարանի Թ. 587 Պատարագամտոյցն տենագարանի Թ. 587 Պատարագամտոյցն «գրեցաւ . . . ձեռամբ Դաւիթ իրիցի ի մայրաքաղաքս Արգրում ի թուին ՌձԸ, յունիսի Ժ» :

Եթէ հաստատուի Դաւիթ երէցիս նոյնութիւնը Դաւիթ Սալաճորեցու հետ, ոչ միայն կուան մը կ'ունենանք ժամանակի մասին, այլ եւ ծանօթացած կ'ըլլան Դաւիթի ծնողաց անունները :

Դաւիթ Սալաճորեցի երգած է տաղեր : Անոնց մեծագոյն մասը ստեղծագործութիւնն է իր պատնեկութեան տարիներու, երբ տակաւին գալիր կամ սարկաւազ էր : Ունինք Սալաճորեցու քնարէն հետեւեալ տաղերը .

1. Անխորագիր . տող մը հայերէն եւ տող մը տաճկերէն .

Հայր արարիչ, Տէր կենդանի .
Հարտէ մէմուռ սին վարդարա . . .
Վերջ՝ Սալաճորցի որբիկ Դաւիթ
յուզի դարայ սէն կուանաքար,
Դու կարգացող քահանայու,
տայիմ չաղը, դանի սաթար . . . :

Չեռագիր՝ Վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 1ա—7ա :

2. Երգ Աստուածածնայ :
Պարծանք դասուցըն վերնական
Կոյս Մարիամ Աստուածածին .
Դու յԱննայէ ընծայեցար,
արժանացար Հոգոյն շնորհաց . . .

Վերջ՝ Որիկ Դաւիթ Սալաճորցի,
տըւիր ուրար՝ գիրս կարգացի,
Փոքր ի շատէ գեղզ գովեցի,
Կոյս Մարիամ Աստուածածին . . . :

Չեռագիր՝ Վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 9ա—11բ :

3. Տաղս այս համեղագոյն է ի երերունն Դաւիթ վարդապետի է, գեղջիւ Սալաճորցի (ի մահն դստեր իւրոյ) :

Փառք քեզ թագաւոր փառաց,
քեզ փառք տան աշխարհս ամենայն .
Վերջ՝ Սալաճորցի որբիկ Դաւիթ
փառք չասի ես օր մի մեղաց . . .

Ես եմ մեղաւոր անղարձ,
մէկ ու ձար դուստր իմ սիրական :

Չեռագիր՝ Վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 156, թղ. 54բ—56բ : Պարիս, Ազգային Մատ., Թ. 290, թղ. 202բ—203բ (անանուն) :

4. Անխորագիր (տող ի վերայ մահուան) :
Քեզի համրով օր էր տըված,
Կարմիր ու սեւ գիր էր գըրած .
Աշխարհս քեզի մուլք չէր տըւած,
Փուճ աստնվորիս ինչ կու դատիս . . .

Վերջ՝ Ես Դաւիթն եմ իրիցացու,
ըստեղծող Տէր, զիս կարգացու . . . :

Չեռագիր՝ Վիեննա, Միլիթ. Մատեն., Թ. 369, թղ. 22ա—23բ :

5. Գովասանք ծաղկանց :
Օրհնեալ ես դու, Հայր երկնաւոր,
անքնեկի աստուածութիւն .
Կամիմ գովել սակաւ մի բան,
միտքըս արկար, իսկըս է ի քուն . . .